ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ԳՐԻԳՈՐ ԽԽՏԻԱՐՅԱՆ, ԼԻԼԻԹ ՆԵՐՍԵՍՅԱՆ

Ֆինանսական գործունեությունը բիզնեսի աշխատանքային լեզուն է, և գործնականում անհնար է առանց ֆինանսական ցուցանիշների վերլուծել կազմակերպության գործունեությունը և աշխատանքի արդյունքները:

Հայաստանի Հանրապետությունում դեռևս մշակված չեն տնտեսության առանձնահատկությունները հաշվի առնող ճկուն մեթոդներ, թերի են դեբիտորական և կրեդիտորական պարտքերի օպտիմալացման գործընթացի կարգավորման օրենսդրական հիմքերը, իսկ գործնականում դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հարաբերակցության գործակիցը գրեթե տեղ չունի կազմակերպության ֆինանսական դրությունը գնահատող ցուցանիշների համակարգում: Կարծում ենք՝ անհրաժեշտ է ընդգծել դեբիտորական և կրեդիտորական պարտքերի համեմատական վերլուծության նշանակությունը՝ կարևորելով օգտագործումը: Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի օպտիմալությունը հանգեցնում է կազմակերպության տնտեսական գործունեության բարելավման, շահութաբերության ցուցանիշների բարձրացման, ինչն ընդգծում է կազմակերպության տնտեսական գործունեության ֆինանսական ցուցանիշների մանրակրկիտ վերլուծության անհրաժեշտությունն ու կարևորությունը:

Նշված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է.

1) դիտարկել ընթացիկ ակտիվները և դեբիտորական պարտքերը,
2) վերլուծել դրանց կազմն ու կառուցվածքը,
3) կատարել դեբիտորական և կրեդիտորական պարտքերի համեմատական վերլուծություն, բացահայտել օպտիմալության չափերը և օգտագործման բարելավման ուղիները:

Ընդհանուր առմամբ, հաշվապահական հաշվեկշռում և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներառված տվյալները առանձին-առանձին խոսուն չեն, ուստի օբյեկտիվ գնահատման համար անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնական գործոնների քանակական հարաբերակցությունը (ֆինանսական գործակից):

Ֆինանսական գործակիցը հաշվապահական երկու ցուցանիշների հարաբերակցություն է[1]: Ֆինանսական գործակիցների առավելությունները դրանց հաշվարկման պարզության մեջ են: Սովորաբար համեմատվում են միևնույն կազմակերպության ցուցանիշներն ըստ ներկա և անցյալ ժամանակաշրջանների, կատարվում են նաև կանխատեսումային գնահատումներ: Այսպիսով՝ բացահայտվում է կազմակերպության ֆինանսական դրության բարելավման կամ վատացման փաստը: Վերլուծվող կազմակերպության տվյալները համեմատվում են նաև.

[1] Տե՛ս **Ван Хорн Дж.**, Основы управления финансами. М., ,,ФиС", 2005, էջ 141:

- համընդհանուր ճանաչում ունեցող նորմաների հետ՝ ռիսկի աստիճանի գնահատման և հնարավոր սնանկության կանխատեսման համար,
- այլ կազմակերպությունների համանման տվյալների հետ, ինչը թույլ է տալիս բացահայտել կազմակերպության թույլ և ուժեղ կողմերը, հնարավորությունները:

Ընդունված տեսակետ է՝ եթե փաստացի ֆինանսական ցուցանիշների մակարդակը ցածր է համեմատման բազայի ցուցանիշների մակարդակից, ապա դա մատնանշում է կազմակերպության գործունեության խոցելիությունը, և լրացուցիչ վերլուծության կարիք է զգացվում: Իհարկե, հնարավոր է, որ լրացուցիչ վերլուծությունը չհաստատի ի հայտ եկած բացասական միտումները՝ կապված կազմակերպության քաղաքականության և որոշակի պայմանների յուրահատկության հետ: Ֆինանսական գործակիցները չեն բացահայտում հաշվապահական հաշվառման մեթոդների տարբերությունները, չեն արտացոլում բաղկացուցիչների որակները[2]: Դրանք կայուն բնույթ ունեն:

Կազմակերպության ֆինանսական դրությունը բնութագրվում է ցուցանիշների այնպիսի համակարգի միջոցով, որոնք արտացոլում են տնտեսավարող սուբյեկտի՝ իր գործունեությունը ֆինանսավորելու և պարտավորությունները ժամանակին մարելու ընդունակությունը[3]: Ֆինանսական վերլուծությունը կարևոր է ինչպես կազմակերպության համար՝ գնահատելու իր ռազմավարությունն ու մարտավարությունը, այնպես էլ գործընկերների համար (բանկեր, ապահովագրական ընկերություններ, բաժնետերեր և այլն): Կախված այն հանգամանքից, թե ովքեր են իրականացնում ֆինանսական վերլուծությունը, հաշվարկվում են տարբեր ցուցանիշներ:

Վերլուծական հետազոտության ընթացքում շատ կարևոր է նաև հստակ պատկերացում կազմել դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հարաբերակցության մասին: Հայտնի է, որ կրեդիտորական պարտքերը դեբիտորական պարտքերի ծածկման աղբյուր են համարվում[4]: Ուստի պետք է համադրել դեբիտորական և կրեդիտորական պարտքերի գումարները:

Հաշվարկենք դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հարաբերակցության գործակիցը՝

$$Գ_{դկհ} = Դ_{պ} / Կ_{պ} = (Դ_{պ} / Ը_{ա}) \times (Ը_{ա} / Կ_{պ}) = (Դ_{պ} / Ը_{ա}) \times (Ը_{ա} / Ը_{պ}) \times (Ը_{պ} / Կ_{պ}) = = (Դպ / Ըա) \times (Ըա / Ըպ) / (Կպ / Ըպ) = (Դպ / Ըա) \times Գիը / (Կպ / Ըպ)$$ [5]

որտեղ՝ $Գ_{դկհ}$- դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հարաբերակցության գործակից,

$Դ_{պ}$- դեբիտորական պարտքեր,

$Կ_{պ}$- կրեդիտորական պարտքեր,

$Ը_{ա}$- ընթացիկ ակտիվներ,

$Ը_{պ}$- ընթացիկ պարտավորություններ,

---

[2] Տե՛ս **Áëàíê È. À.,** Óïðàâëåíèå àêòèâàìè. Ì., 2002, էջ 264:

[3] Տե՛ս **Савицкая Г.,** Анализ хозяйственной деятельности предприятия. М., 2007, էջ 248:

[4] Տե՛ս **Ա. Սարգսյան, Կ. Առաքելյան,** Տնտեսական գործունեության վերլուծություն, Եր., «Տնտեսագետ», 2005, էջ 307:

[5] Բանաձևը՝ Գ. Իխտիարյանի:

$Գ_{իր}$– ընթացիկ իրացվելիության գործակից:

Աղյուսակ 1

Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի համեմատական գործակիցը "Ջերմուկ Գրուպ" ՓԲԸ տեղեկատվական տվյալների հիման վրա

Ցուցանիշներ	2006 թ.	2007 թ.	2008 թ.	Շեղում	
				2007 թ.՝ 2006 թ. համեմատությամբ	2008 թ.՝ 2007թ համեմատությամբ
1. Դեբիտորական պարտքեր (հազ. դր.)	488886	399267	1016963	- 89619	+617696
2. Կրեդիտորական պարտքեր (հազ. դր.)	73318	132102	284651	+58784	+152549
3. Հարաբերակցության գործակից	6.67	3.02	3.57	- 3.65	+0.55
4. Ընթացիկ ակտիվներ (հազ. դր.)	1045258	1032137	1866990	-13121	+834853
5. Ընթացիկ պարտավորություններ (հազ. դր.)	2633580	1808885	1618096	- 824695	- 190789
6. Դեբ. պարտքերի տեսակարար կշիռը ընթացիկ ակտիվների մեջ	60.37	43.02	37.93	-17.35	-5.09
7. Ընթացիկ իրացվելիության գործակից	0.4	0.57	1.15	+0.17	+0.58
8. Կրեդ. պարտքերի տեսակարար կշիռը ընթացիկ պարտավորությունների մեջ	3,1	5.68	12,88	+2.58	+7.2

Այդ հարաբերակցությունը 2006-ին կազմել է՝ 488886 : 73318 = 6.67, 2007-ին՝ 399267:132102=3.02, իսկ 2008-ին՝ 1016963 : 284651 = 3.57: Թեև հարաբերակցության գործակիցը կրճատվել է, սակայն «Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ դեբիտորական պարտքերի՝

կրեդիտորական պարտքերի գերազանցման պայմաններում կազմակերպության ֆինանսական կայունությունը, միևնույն է, վտանգված է:

Կատարենք գործոնային վերլուծություն շղթայական տեղադրումների եղանակով.

$$Գ_{դկհ} = Դ_{պ} / Կ_{պ}$$

$$Գ_{1} = Դ_{պ0} / Կ_{պ0}$$

$$Գ_{2} = Դ_{պ1} / Կ_{պ0}$$

$$Գ_{3} = Դ_{պ1} / Կ_{պ1}$$

$Գ_{ı}$ գործակիցը 2006-2007 թթ. կազմել է 6.67, $Գ_{2}$-ը՝ 5.45, իսկ $Գ_{3}$-ը՝ 3.02: Նույն գործակիցները 2007-2008 թթ. կազմել են, համապատասխանաբար՝ 3.02, 7.7, 3.57:

2007 թ.՝ $Գ_{2} - Գ_{1} = -1.22$ (դեբիտորական պարտքերի փոփոխության ազդեցությունը),

$Գ_{3} - Գ_{2} = -2.43$ (կրեդիտորական պարտքերի ազդեցությունը):

2008 թ.՝ $Գ_{2} - Գ_{1} = +4.68$ (դեբիտորական պարտքերի փոփոխության ազդեցությունը),

$Գ_{3} - Գ_{2} = -4.13$ (կրեդիտորական պարտքերի ազդեցությունը):

Այսպիսով՝ 2007 թ., 2006 թ. համեմատությամբ, $Գ_{դկհ}$-ի փոփոխությունը կազմել է - 3.65, իսկ 2008 թ., 2007 թ. համեմատությամբ՝ + 0.55:

Կրեդիտորական և դեբիտորական պարտքերի մի քանի տարիների շարժընթացի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս դատելու կազմակերպության մատակարարների և կապալառուների, գնորդների և պատվիրատուների նկատմամբ պարտավորությունների կատարման ճշտապահության մասին: Դեբիտորների և նրանց պարտավորությունների աճի միտումները վկայում են ֆինանսական կառավարման ոլորտի լուրջ խնդիրների, դրանց լուծման ուղղությամբ միջոցառումների ձեռնարկման անհրաժեշտության մասին: Միևնույն ժամանակ, գնորդների պարտավորությունների աճը կարող է կապված լինել իրացման ծավալների կտրուկ աճի հետ, և եթե վճարողները վստահելի են, ապա հիմնականում կարելի է հանգիստ լինել կազմակերպության հետագա ֆինանսական դրության առումով: Այլ է խնդիրը, երբ կասկածներ են առաջանում վճարողների վճարունակության վերաբերյալ:

Այս դեպքում կազմակերպությունը պետք է աչալուրջ լինի, որպեսզի իր դեբիտորական պարտքերը չդառնան անհուսալի և մեծ վնասներ կրի: Իսկ կազմակերպության կրեդիտորական պարտքերի ավելացումը խոսում է կազմակերպության նկատմամբ վստահության մասին[6]:

Այսպիսով՝ առաջարկում ենք $Գ_{դկհ}$ բանաձևը, որով կարելի է կատարել համապատասխան հաշվարկներ և կարևոր եզրակացություններ: Այստեղ հաշվի են առնվում ոչ միայն դեբիտորական և կրեդիտորական պարտքերի բացարձակ մեծությունները, այլ նաև դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռն ընթացիկ ակտիվների մեջ, կրեդիտորական պարտքերի տեսակարար կշիռն ընթացիկ պարտավորությունների մեջ և ընթացիկ իրաց-վելիության գործակիցը, որը ներկայացնում է ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների հարաբերությունը:

[6] Տե՛ս **Савицкая Г.,** Анализ хозяйственной деятельности предприятия. Минск, 000 ,,Новое знание", 2002, էջ 487-495: